ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 02.11.2018թ. N 315/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Օսիպյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Դեմիրչյանը, Մ.Կարապետյանը, և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Հաշվի առնելով, որ Դավիթ Քոչարյան ԱՁ-ն և ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետում շտկել են հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողով շարունակեց հայտերի գնահատումը՝

-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Օսիպյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին՝

-1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած Դավիթ Քոչարյան ԱՁ-ին ճանաչել ընտրված մասնակից:

-2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին ճանաչել ընտրված մասնակից:

-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-18/1 ծածկագրով միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

-Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակիցներին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Օսիպյան

Անդամներ՝ Լ.Դեմիրչյան

Մ.Կարապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան